

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՂԵՆՅԱՑ ՎԱՆՔԻՑ

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմական նիգ (Ապարանի շրջան) գավառում է գտնվում միջնադարյան շախմատների մշակութային և հոգևոր կենտրոններից մեկը՝ Թեղենյաց վանքը, որը երեք շինություններից բաղկացած ճարտարապետական խոշոր համալիր է: Վանքի Կաթողիկե եկեղեցին կիսավեր վիճակում է: Դատելով ճարտարապետական ձևերից և զարդաքանդակներից, այն, հավանաբար, XI դ. գործ է: Գավիթը ճարտարապետական մի հոյակերտ կառույց է և պատկանում է քառասյուն գավիթների տիպին¹ (Հոռոմոս, Գոշավանք, Տեղեր, Սաղմոսավանք և այլն): Հյուսիսային պատին փորագրված շինարարական արձանագրության վկայությամբ այն կառուցվել է XIII դ. երկրորդ տասնամյակում: Երրորդ շինությունը սեղանատունն է, որից պահպանվել են միայն հյուսիսային պատը և մյուս պատերի հիմնամասերը, կառուցվել է XIII դ., շատ նման է Քոբայրի սեղանատանը²: Գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի է, որ վանքում եղել է նաև Աստվածածին եկեղեցի³, որն, ամենայն հավանականությամբ, շուտ է ավերվել և ծածկվել հողով: Գավթի արևելյան պատին կից արտաքուստ նշմարվում են շինության հետքեր: Հավանաբար, դրանք ավերված Աստվածածին եկեղեցու մնացորդներն են:

Վանքից մոտ 200 մ հյուսիս, անտառի մեջ, գտնվում է գերեզմանոցը, ուր կան մեկ տասնյակի հասնող երկլանջ տապանաքարեր, մի հոյակերտ, որմնափակ խաչքար, բարձր պատվանդանով մի խաչքար և այս ու այն կողմ ընկած խաչքարերի բեկորներ ու պատվանդաններ:

Թեղենյաց վանքը հիշատակվում է VIII դ.⁴: Սա ապացույց է, որ ներկայիս շինությունների տեղում եղել են ավելի վաղ շրջանի վանական կառույցներ, որոնց հետքերը կարող են ի հայտ գալ, թերևս, պեղումների շնորհիվ:

Վանքի մեծ հռչակի մասին են վկայում այստեղ այցելած և կրթություն ստացած մի շարք անվանի գործիչներին վերաբերող հիշատակությունները՝ Վահան Գողթնեցի (726—727), Հովսեփ Գլինեցի (1168—1169), Վարդան Արևելեցի (XIII դ.), Վեցիկ ճարտարապետ (XIII դ.), Տերտեր Երևանցի (XIII—XIV դդ.), Վաչուտյան Քուրդ իշխանաց իշխան, նրա կին Խորիշահ (XIII դ.) և այլն: Պատահական չէ նաև, որ ներսես Շնորհալին հայոց եկեղեցու նոր ժամագրքի կազմման համար հիմք է ընդունել Թեղենյաց և Մաքենացոց վանքե-

¹ Ս. Խ. Մնացականյան, *Архитектура армянских притворов*, Ереван, 1952, стр. 39.

² Օ. Խալպախյան, *Архитектура армянских трапезных («Архитектурное наследство»*, т. 3, М., 1953, стр. 134).

³ „A Catalogue of the Armenian manuscripts at the British museum by F. C. Colnibeare“, London, 1913, էջ 295.

⁴ «Ցայմաուրք», էջմիածին, 1730, էջ 525:

բում գոյութիւնն ունեցող ժամակարգը: Վանքում գործել է գրչության դպրոց, դրվել են բազմաթիւ ձեռագրեր⁵:

Քեղենյաց վանքի պատմության լուսարանման առումով արժեքավոր են պահպանված երկու տասնյակից ավելի վիմագիր արձանագրությունները, որոնցից առ այսօր միայն մեկն է հրատարակվել⁷: Արձանագրությունների ամբողջական հրատարակությունը թողնելով հետագայի, անդրադառնանք դրանցից մեկին: Տասը տողանոց այդ արձանագրությունը փորագրված է գավթի հյուսիսային պատի վերին աջ անկյունում, ներսի կողմից: Առաջին վեց տողերը հեղտությամբ վերծանվում են, իսկ շորսը հողմնահարված են և լրիվ շեն ընթերցվում:

Մեր վերծանությունը արձանագրությունը հետևյալ տեսքն ունի:

ԻՌՈՒԱԿԱՆՈՒԵՄՏԱՅՈՑ
 :ՈՇՁ: ԵՍԱԿՐԱՄՉԱԻՈՒՇ
 ՈՐԴԻՊԱՏՐՈՆԿԱՆԷՏՈՒ ԱՐԴ
 ԵԱՆՅԻՄՈՅԱԻԳՆՈՒԹՆԻՇԻՆ
 ՈՒԹՆԳԱԻԹԻՆԵԻԱՌԱՋՆՈՐՔ
 ԵԿԵՂԵՑՈՅՍԿԱՐԳԵՑԻՆԻՏԱ
 ԿՈՐԿԻՐԱԿԵԻՆ
 ԱՏՈՒՄՆԻՄ
 ՊԱՏԱԳԵՔ
 ԵԱԼԵՂԻՑԻՆ


5 Ղ. Ա լ ի շ ա ն, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 442:
 6 Ղ. Ա լ ի շ ա ն, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 371, Բ. Ս ար գ ի ս յ ա ն, Մայր-
 ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Բ, 1924, էջ 313—
 314, ռուսաց Ձեռագրաց Երևանի Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 1252, հ. Բ, Երե-
 վան, 1970, էջ 344, Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրացուցակ, էջ 295, Բողևան Մա-
 տենադարանի հայերեն ձեռագրացուցակ, էջ 173, Լ. Խ ա շ ի կ յ ա ն, ԺԴ դարի հայերեն ձե-
 ռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 6:
 7 Յ. Շ ա հ խ ա թ ա ն ե ա ն ց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւառացն-
 Արարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 176, Ղ. Ա լ ի շ ա ն, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 256:

Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵՄ շԱՅԻՅ
 .: ՈՄՁ.: (1207), ԵՍ ՎԱՀՐԱՄ ՉԱԻՈՒՇ
 ՈՐԴԻ ՊԱՏՐՈՆԿԱՆ ԷՏՈՒ [Յ]ԱՐԴ-
 ԵԱՆՑ ԻՄՈՑ ԱԻԳՆՈՒԹՆ Ի ՇԻՆ
 ՈՒԹՆ ԳԱԻԹԻՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՔ
 ԵԿԵՂԵՑՈՅՍ ԿԱՐԳԵՅԻՆ Ի ՏԱՐ
 [ՈՋՆ? ԺԱՄ Ի] ՆՈՐ ԿԻՐԱԿԵԻՆ
 ԱՀՈՒՄՆ ԻՄ
 ՊԱՏԱՐԱԳԵՔ
 [ԿԱՏԱՐԻՉՔՆ ԳՐՈՅՍ ԱԻՐՀՆ]ԵԱԼ ԵՂԻՅԻՆ:

Մասնագիտական գրականության մեջ դավթի կառուցման տարեթիվը նշված է 1167 (ՈժՁ)⁸, որը սխալ վերծանության արդյունք է: Արձանագրության ուսումնասիրությունից պարզվեց, որ ՈժՁ-ն պետք է ընթերցել ՈՄՁ (1207), Ժ և Մ տառերի արտաքին նմանությունը շփոթության տեղիք է տվել: Վերծանված թվականի ստուգությունը հաստատվում է նաև Բջնիի Աստվածածին եկեղեցու մուտքի ճակատակալ քարի վրայի արձանագրությամբ, որը բավական լավ է պահպանվել և դյուրությամբ վերծանվում է: Այն հրատարակել է հնագետ Հ. Եղիազարյանը⁹, սակայն վերծանության մեջ տեղ են գտել որոշ անճշտություններ, մասնավորապես սխալ է վերծանվել արձանագրության հեղինակի անունը: Նկատի ունենալով այդ արձանագրության կարևորությունը քննվող հարցի կապակցությամբ, այն մեջ ենք բերում ամբողջությամբ, տալով որոշ հատվածների նոր վերծանություն.



⁸ С. X. Мнацаканян, «Գլ. աշխ.», էջ 39:
⁹ Հ. Եղիազարյան, Բջնիի վանքը և Բջնի դյուղի մյուս հուշարձանները (աղբյուրներ, 1963, ԺԱ, էջ 42):



ԹՎ ՈՍԸ (1209)

Յ[ԱՇ]ԽԱՐԶԱԿԱԿՈՒԹԵՆ ՔԱՁԱՅ ԵՒ ՅԱՂԹ
 ՈՂ[ԱՅ ՄԵՍ] ԾԱՆՇՆԱՆԱՅ ՁԱՔԱՐԷՒԵՒ ԵՒ
 ԻԻԱԼՆԷԻ ՈՂՐԴՈՑ ՍԱՐԳՍԻ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒ
 ԹԵՆ [ՏՐ ՎՐ]ԹԱՆԻՍԻ, ԵՍ ՄԵՂՈՒՑԵԼՇԱՌԱՅ ԱՅ
 ՎԱԶ[ՐԱ]Մ ՁԱԻՈՒՇՍ, ՈՐ ՇԻՆՅՑԻ ՁԻՇԽԱՆԱՎԱՆԻՑ
 ՄԵՍ Ե[ԿԵ]ՂԵՑԻՆ ՅԱՆՈՒՆ ՍԲ ԱՇԱՇՆԻՆ ԵՒ ՁԱՅՍ ԱՅԱ
 ԾԻՆՄ ՆՈՂՈԳԵՑԻ ՍԱԿՎ, ՈՐ Ի ԲՆԷ ՉԷՐ ՍԱԿԱՍ, ԵՒ ՂԱՍ
 ՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ: Ե: ԱԻՐ [Ժ]ԱՄ Ի ՏԱԿՆԻ ՍԲ ՇՆՆԴԵԱՆՆ
 ՎՆ ՓՐԿՈՒԹԵՆ ՂՈԳՈՑ ԻՄՈՑ. ՈՎ ԽԱՓԱՆԷ ՁՊԱՏԱՐԱԳՆ
 [ՄԵՐՈՑ] ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿ[ԱՆ] Է ԱՌԱՋԻ ՔԻ:

Եթե առաջին արձանագրության մեջ թվականը որոշ տարակարծությունների տեղիք է տվել և սխալ է վերծանվել, ապա այստեղ այն ընթերցվում է դյուրությամբ՝ ՈՍԸ (1209): Երկու արձանագրությունների համադրումից պարզ երևում է, որ դրանք գրվել են նույն մարզու՝ Վահրամ շավուշի ձեռքով:

Վահրամը, եթե 1207 թ. Թեղենյաց վանքի արձանագրության մեջ նշվում է որպես գավթի շինարարությանը օժանդակող, ապա Բջնիի 1209 թ. արձանագրությունում նա ոչ միայն նորոգում է ամբողջ եկեղեցին, այլև սալահատակել է տալիս այն՝ «որ ի բնէ շէր սալած» (արձանագրության «շինեցի» բառը այստեղ նշանակում է «նորոգել»):

Արդ՝ ո՞վ է այս Վահրամը, ո՞ր իշխանական տան ներկայացուցիչն է և, վերջապես, ի՞նչու է նա անվանվում «չաւուշ»:

Վահրամ շավուշը մատենագրական և վիմագրական սկզբնաղբյուրներով

հիշատակված չէ և հայանի է, որ իր հիմնական շինարարական գործունեությունը ծավալել է Բջնիում:

Բջնին մինչև X դ. պատկանել է Վարաժնունյաց իշխաններին: X դ. սկզբում այն դառնում է Պահլավունյաց իշխանական տան ժառանգական սեփականությունը, մինչև թուրք-սելջուկների արշավանքները և նրանց կողմից Բջնիի գրավումը: Վասակ Պահլավունու ժամանակ Բջնին դառնում է իշխանական նստոց, իսկ մի քանի տարի անց Պետրոս Գետադարձ հայոց կաթողիկոսը, Հովհաննես-Սմբատ թագավորի հրամանով, այն դարձնում է եպիսկոպոսանիստ: 1031 թ. Վասակի որդին՝ Գրիգոր Մագիստրոսը, այստեղ կառուցում է Աստվածածին եկեղեցին, որի մուտքի ճակատակալ քարի վրա էլ փորագրված է Վահրամ չավուշի: Երկրորդ արձանագրությունը:

1201 թ. Զաքարյան եղբայրները հայ-վրացական միացյալ ուժերով ետ են գրավում Բջնին: Այդ ռազմական գործողություններին ակտիվորեն մասնակցում է նաև Վասակ Խաղբակյանը, որին և որպես ժառանգական սեփականություն նվիրվում է Բջնին իր շրջակա տիրույթներով:

Բջնիի արձանագրության մեջ հիշատակված է նաև Վրթանես եպիսկոպոսը, որը 1206 թ. մասնակցում է Զաքարե ամիրսպասալարի կողմից հրավիրված Լոռիի եկեղեցական ժողովին¹⁰: Եթե այս արձանագրության մեջ վկայված անձինք՝ Իվանեն, Զաքարեն և Վրթանես եպիսկոպոսը հայոց պատմության մեջ բավական հանրահայտ են, ապա արձանագրության հեղինակի՝ Վահրամ չավուշի անունը ծածկված է անհայտության քողով: Դատելով այն փաստից, որ Բջնին տվյալ ժամանակ պատկանում էր Խաղբակյաններին և այնտեղ շինարարական գործունեություն կարող էին ծավալել հիմնականում այդ տոհմի ներկայացուցիչները, կարծում ենք, որ Վահրամը տեղական իշխանական տան՝ Խաղբակյան տոհմի, պայազատներից էր:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Վահրամի հոր՝ Պատրոնիկի անունն ու անձնավորությունը: Այս անունը հայ իրականության մեջ հազվադեպ է հանդիպում: Մեզ հայտնի է այդ անվան հիշատակության երեք դեպք, որոնք կարող են այս կամ այն չափով արնչվել մեր նյութին: Գրանցից մեկը Վահրամի հայրն է: Մյուս հիշատակությունը որոշ չափով թեական է, քանի որ անունը միայն Պատրոնիկ ձևով չի նշվում:

1191 թ. Նոր Գետիկի վանքը կառուցելու ժամանակ Մխիթար Գոշին օժանդակում են Խաչենի իշխան Վախթանգը և նրա եղբայրները՝ Գրիգորիսը, Խոյզանը, Վասակը¹¹: Ահա այս Վասակն է, որ 1201 թ. Խաղբարի կամ Խաթրա վանքի մի արձանագրության մեջ անվանվում է Պատրոնիկ. «Յորժամ թուականն էր ՈՍ (1201 թ.) Պատրոնիկն Վասակ, թոռն Կիւրիկեայ թագաւորին, որդի Հասանայ որդոյ Մակոս, տեառն Հաթերքո...»¹²: Ապա պատմվում է, որ Պատրոնիկ Վասակը ցանկանում էր խաչքար կանգնեցնել, սակայն չի հաջողվում, «քանզի երթեալ եղել ի Գոլոշտեան եւ առ զնա յանաւրինաց»: Նրա գործը իրականացնում են որդիները՝ Խոյզանը և Խավչախը, իսկ ինքը՝ Վասակը, 1201 թ. զոհվում է:

¹⁰ Կիրակոս Բանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությանը Կ. Ա. Մեխիթ-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 172:

¹¹ Նույն տեղում, էջ 215:

¹² «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանյանը, Պետերբուրգ, 1913, էջ 44:

Պատրոնիկ անվան երրորդ հիշատակութիւնը վերաբերում է 1211 թ.: Հավապտուկի վանքից Գանձասար տանող ճանապարհի եզրի խաչքարի վրա կարդում ենք. «Թի ՈԿ (1211 թ.) ԵՍ ՊԱՏՐՈՆԻԿ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ ՀՈԳ(ՈՅ ԻՄՈՅ)»¹³:

Վերը բերված փաստերից պարզվում է երկու հանգամանք:

1. Թե՛ վասակ Պատրոնիկը¹⁴, և թե՛ Հավապտուկի Պատրոնիկը ապրել և գործել են գրեթե նույն ժամանակաշրջանում, ինչ-որ Վահրամ շավուշի հայրը:

2. Երբեք էլ կապված են խաչների կամ խաչենցիների հետ¹⁵:

Անունների և այդ անձանց գործունեություն աշխարհագրական միջավայրի նույնությունն ու համադրումը թույլ են տալիս առաջ քաշելու երկու վարկած: Ըստ առաջինի՝ Պատրոնիկ վասակը և Վահրամի հայր Պատրոնիկը նույն անձն են:

Վասակը հիշատակված է 1191 և 1201 թթ., մոտավորապես այն ժամանակ, երբ կարող էր կենդանի լինել և գործել Վահրամի հայրը: Աղբյուրներում հիշատակված են վասակ Պատրոնիկ խաչենցու երեք որդիները, որոնցից Գրիգորիսը վկայված է 1224 թ. Դադի վանքի մի վիմագրում՝ որպես վանքի առաջնորդ և ժամատան կառուցող¹⁶: Հետագայում Գրիգոր եպիսկոպոսը (նա արդեն օծվել էր եպիսկոպոս) անվանի դեմք է դառնում: Նրան տեսնում ենք Դավիթ Մարեցու դեմ ծավալված դավանաբանական պայքարի մասնակիցներին¹⁷, ինչպես նաև 1253 թ. մոնղոլական խանին այցելած Հասան Զալալի շքախմբի մեջ¹⁸: Ինչպես Կ. Մելիք-Օհանջանյանը¹⁹, այնպես էլ Բ. Ուլուբաբյանը²⁰ շեն բացառում, որ այս Գրիգոր եպիսկոպոսն է «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկի հեղինակը, այսինքն Գրիգոր Ականցին: Ուսումնասիրելով Դադի վանքի արձանագրութիւնները Ուլուբաբյանը գրում է. «Դադի վանքում առաջնորդություն արած բոլոր հաթերքցիներն էլ Գրիգորիս էին կոչվում»²¹, այնուհետև ավելացնում, որ նման երևույթ դիտվել է Գանձասարի վանքում, որտեղ առաջնորդները անվանվել են Հովհաննես: Նշանակում է մեր Գրիգորիսը սկզբնապես կարող էր այլ անուն ունենալ, իսկ ինչու ոչ Վահրամ, մանավանդ, որ նրանց տոհմում այդ անունը օտար չէր (Գրիգորիսի պապի՝ Հասանի եղբոր, անունը նույնպես Վահրամ էր)²²: Նշանակում է, եթե Պատրոնիկ-վասակը Վահրամի հայրն էր, իսկ Վահրամը՝ նրա որդի Գրիգորիսը, ապա Վահրամ-Գրիգորիսը կարող էր 1207 թ. շինարարական գործունեություն ծավալել Քեղեկաց վանքում ու Բջնիում. առաջինում որպես սոսկ հավատացյալ կամ տեղի իշ-

¹³ И. А. Орбели, Надписи Гандзасара и навоцтука, Петербург, 1918, стр. 41.

¹⁴ Հնարավոր է, որ վասակի մահվանից հետո նրա անունը հիշվել է միայն Պատրոնիկ ձևով:

¹⁵ Հայտնի է, որ խաղրակյանները սերում էին խաչների իշխաններից, ուստի հնարավոր ենք համարում խաչենցի իշխանազունի մասնակցությունը խաղրակյան տոհմի կատարած շինարարական աշխատանքներին:

¹⁶ Բ. Ուլուբաբյան, խաչենի իշխանությունը X—XVI դդ., Երևան, 1975, էջ 152:

¹⁷ Նույն տեղում, էջ 286:

¹⁸ Նույն տեղում, էջ 197:

¹⁹ Կիրակոս Գանձակեցի, Առաջարան, էջ ԻԱ, ժան.**:

²⁰ Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 203:

²¹ Նույն տեղում, էջ 152:

²² Նույն տեղում, էջ 149:

խանները՝ վաշտույանների հետ ինչ-որ ձևով կապված անձ, երկրորդում որպես տեղացի իշխանագուցի կամ խաչնից եկած նրանց հարազատի:

Ըստ մյուս վարկածի՝ վահրամի հայր Պատրոնիկին նույնացնում ենք Հավապտուկի խաչքարի արձանագրության մեջ հիշված Պատրոնիկի հետ: Այսինքն՝ վահրամի հայրը գոնե մինչև 1211 թ. կենդանի է եղել: Այս Պատրոնիկի և նրա անձի հետ կապված այլ մանրամասներ հայտնի չեն:

Չնայած առաջ քաշված վարկածներին, այնուամենայնիվ, անհավանական չէ, որ երեք պատրոնիկներն էլ տարբեր անձնավորություններ են: Այս դեպքում լրացուցիչ տեղեկությունների և փաստերի բացակայության պատճառով իսկապես վահրամի և նրա հոր՝ Պատրոնիկի անունները մնում են անհայտության մեջ:

Ուշագրավ է վահրամի անվան հետ հիշատակված «չաուշը» տերմինը, որն առայժմ միակն է հայ վիմագրության մեջ (գոնե մինչև XV դ.):

Հայ մատենագրության մեջ «չաուշի» առաջին հիշատակությունը հանդիպում ենք XIII դ. կեսերին, «Անսիզք Անտիոքայ» աշխատությունում, ուր այդ բառը գործածված է մի քանի անգամ²³: Հետագա դարերի վկայություններից հարկ է նշել Կարապետ Սասնեցունը²⁴, իսկ ավելի ուշ շրջանում հանդիպում ենք Դավիթ Բաղիշեցու մոտ²⁵:

Բառարաններում այս տերմինը մի շարք բացատրություններ ունի: «Անսիզքում», ըստ Աճառյանի, պետք է հասկանալ «սոստիկան»²⁶ իմաստով, Կարապետ Սասնեցու մոտ՝ «նուիրակ»²⁷, իսկ հետագայում այն օգտագործված է որպես զինվորական կոչում՝ երեսնապետ, տասնապետ և այլն:

«Անսիզքի» ֆրանսերեն տեքստում «չաուշը» համապատասխանում է sergent բառին, որը նույնպես մի շարք իմաստներ ունի: «Պաշտօնեայ կամ սպասաւոր դատավորի, նուիրակ, կալանաւորակապ, ստորին պաշտօնատար ոք ի զինուորական»²⁸, «հիսնապետ, ծառա, բարապան»²⁹, «վարոցաւոր»³⁰ և այլն:

Ինչպես Աճառյանը, այնպես էլ Մալխասյանցը այս տերմինը համարում են տաճկերենից փոխառնված (տաճկ. cavuč): Մալխասյանցը եղած իմաստներին ավելացնում է նաև «մունետիկ, դիտող»³¹: Մի քանի այլ բառարաններում կրկնվում են «չաուշի» վերն ասված իմաստները. «նուիրակ, վարոցաւոր, պաշտօնեայ. 2. զօրագլուխ, ճակատայարդար»³², «վարոցաւոր, երեսնապետ»³³, նշված բազմաթիվ նշանակությունների մեջ ուշագրավ է «վարոցաւորը», որը նշանակում է «գաւազանակիր, բրաւոր»³⁴:

²³ «Անսիզք Անտիոքայ», Թարգմ. Սմբատ Գունդատարի, Վենետիկ, 1876, էջ 9, 11, 25, 43:

²⁴ «Կարապետ եպ. Սասնեցույ ներբողեան, Յաղազս վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոբա», Վաղարշապատ, 1897, էջ 50—51:

²⁵ Դավիթ Բաղիշեցի, Դիվան Հայոց պատմության, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 54—55:

²⁶ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 5, էջ 734:

²⁷ Նույն տեղում:

²⁸ «Բառարան համառոտ ի գաղղիական է ի հայ», հ. 2, Վենետիկ, 1812, էջ 55:

²⁹ «Բառարան ֆրանսերեն հայ-աշխարհիկ», Պոլիս, 1892, էջ 943:

³⁰ «Երեքլեզվյան բառագիրք. գաղղիերեն-հայերեն-տաճկերեն», Վիեննա, 1853, էջ 1178:

³¹ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 11:

³² «Համառոտ բառարան ի տաճկական է ի հայ», հ. 2, Վենետիկ, 1841, էջ 736:

³³ «Մեծ բառարան օսմաներեն հայերեն», Պոլիս, 1912, էջ 281:

³⁴ «Նոր բառգիրք Հայկազնեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 798:

Քուրքերենից փոխառյալ այս տերմինը իրականում պարսկական ծագում ունի և թարգմանվում է. «նախընթաց և կարգադրիչ զօրաց»³⁵: Քուրքերենի լավագույն բառարաններից մեկում նշված է, որ բառը փոխառնված է պարսկերենից և «չաուշը» (cavuş) թարգմանված է. «կրտսեր սպա, հրամանատար, որը ղեկավարում է անմիջականորեն ռազմական գործողությունների ժամանակ»³⁶: Բառարանի հեղինակներն այս բառի բացատրության համար որպես հիմք վերցրել են դրա ամենահին հիշատակությունը: Դա 1072—1077 թթ. Մահմուդ Ղազարացու կազմած սելջուկյան բարբառների բառարանն է, որի պահպանված հնագույն օրինակը 1266 թ. է³⁷:

Ե՛վ սելջուկերենում (նաև Քուրքերենում), և՛ պարսկերենում մեր տերմինն ունի նաև այլ նշանակություններ. «աշխատողների վրա ավագ, հսկիչ»³⁸, «գերիների քարավանի ղեկավար, կարգադրիչ»³⁹:

Քուրք-սելջուկների տիրապետության ժամանակ հայերի մոտ սկսվում է գործածվել «չաուշ» կոչումը, ըստ երևույթին, հնագույն՝ կրտսեր սպա, հրամանատար իմաստով: Կարծում ենք, մեր արձանագրության մեջ նշված տերմինը պետք է հասկանալ այս իմաստով: Սակայն այն լայն տարածում չի գտել հայ իրականության մեջ, քանի որ այլ հիշատակություններ չկան:

Այս ամենով հանդերձ, շենք բացառում նաև հիշյալ տերմինի փոխառնված լինելը պարսկերենից, որը կոնկրետ վկայությունների բացակայության պատճառով մնում է սոսկ ենթադրություն:

НАДПИСЬ ИЗ МОНАСТЫРЯ ТЕГЕНИС

ГАГИК САРГСЯН

Резюме

На северной стене притвора монастыря Тегенис высечена надпись, позволяющая уточнить дату его постройки. Надпись гласит о том, что в 1207 г. некий Ваграм чавуш содействовал строительству этого притвора.

В паучной литературе строительство притвора датировалось 1167 г. вследствие неправильной расшифровки упомянутой надписи (дата *ՈՄՁ* (1207 г.)) читалась как *ՈժՁ* (1167 г.). По новой расшифровке она читается *ՈՄՁ*. О точности этой датировки говорит другая надпись того же Ваграма на тимпане церкви Богородицы в Бджни, где дата отчетливо читается *ՈՄՁ* (1209 г.).

На наш взгляд, упомянутый Ваграм происходил из рода Хагбакинов. Привлекает внимание слово «чавуш», восходящее к персидскому языку и заимствованное армянами у турок-сельджуков, употреблявших его в значении «младший офицер, командир, непосредственно руководящий боевым порядком в войнах».

³⁵ «Բառարան Պարսկերէն ըստ կարգի հայկական արձույթների ի Գէորգեայ դպրէ տէր Յովհաննէսեան Պալատցոյ», Պոլիս, 1826, էջ 383:

³⁶ «Древнетюркский словарь», Л., 1968, стр. 142.

³⁷ Նույն տեղում, էջ 12:

³⁸ Д. А. Магазаник, Турецко-русский словарь, М., 1945, стр. 112.

³⁹ Б. В. Миллер, Персидско-русский словарь, М., 1953, стр. 161.